

## Արքեպիսկոպոսի Ազուլեաց Տեառն Պետրոսի ասուածարան վարդապետի (յեշմիածին)

Ըզձալի էր մեզ ողջագուրել զնամակ սիրոյդ պատուելի, որում արժանացուցեր, եւ զմեծ իմն աշխատանս տնտեսութեան յաւարտ ածելոյդ զգոհաբանութիւն ընծայեցեր այնմ, որ յաջողէ զամենայն ամենայնի, եւ ազգեցեր մեզ սիրելեացդ խնդալ ընդ խնդացողդ, զի օրհնեցաւ պսակ տարւոյ քաղցրութեան կամաց Տեառն ի ձեռն քոյին մեծի ճգնողական համբերութեան: Դու ըստ Որդւոյն Աստուծոյ տարազու ի ստորին կողմ երկրի խոնարհեալ զարմացուցեր տնտեսութեամբդ՝ շիջուցեալ կոտորեալ զամենայն արհեստ որսանաց նորին սրտին ծրարելոյ ըստ որում համեմատելի է ասել. Ո՞ւր է մահ յաղթութիւն քո եւ խայթոցն որոգայթարանին: Դու եւ ըստ Բանին Աստուծոյ մարմնագրեցութեան ի փորձութիւն կամակորին մտեալ, զբաժակն արբեալ հոգիածնին հօրդ կամակցութեամբ տեսեր զգառնակսկիծ մահն մատաղատնկին, այլ վախճանն այն վախճան պարգեւաց տնօրինեաց: Դու զպաշտելին Հոռոմցոց յաւուր օծմանէ եպիսկոպոսութեան գորին մինչեւ ցայս վայր քարշեալ ծածկեցեր ի տեսլենէ աչաց, որպէս Թաղէոսիւ առ Աբգարաւ անաստուածութեան ձուլածոյք ամփոփեցաւ եւ արարածք Արարչին ամենից երկրպագուս գոլ մարթացաւ: Դու ըստ քաջ որսողացն՝ զառիւծոյն կենդանւոյ զորոգայթ հրոյ ցուցեր զաղօթս՝ որ առ ընդունօցն՝ եւ զպարան համբերութեան յերկարեցուցեր եւ զկոյս զեղեցկութեան զարդու խոնարհութեանդ՝ գոռոգայինն այն բարք զիջանիլ հնազանդիլ քեզ աւանդութեամբ: Դու ըստ Արտաշիսին Արշակունւոյ զՀելլենացւոցն պաշտելիսն ապուեալ տանէր ի Հայս,